



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՄԱՐԶ	ԼՈՒՈՒ
ՀԱՄԱՅՆՔ	ԹՈՒՄԱՆՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԹԻՎԸ/ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ	9 (ԹՈՒՄԱՆՅԱՆ, ԱԹԱՆ, ԱՀՆԻՉՈՐ, ԴՄԵՂ, ԼՈՐՈՒՑ, ՄԱՐՅ, ՇԱՄՈՒՑ, ԶԿԱԼՈՎ, ՔԱՐԻՆՁ)
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹԻՎԸ (ՄԱՐԴ)	6727
ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	1781
ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔԸ (ՀԱ)	38243.81
ԲԱՐՉՐՈՒԹՅՈՒՆԸ ԾՈՎԻ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԻՑ (Ս)	850-1500
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ	ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄ	հայեր, եզդիներ, ռուսներ
ՀԵՌԱԽՈՍՍԱՅԻՆ ԿՈՐ	(374) 0253
ՀԱՄԱՅՆԱՆՅԱՅԻՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԻ ՀԱՍՅԵՆ	https://tumanyancity.am/



ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Թումանյան համայնքը մարզկենտրոնից գտնվում է 38կմ, մայրաքաղաքից 150 կմ հեռավորության վրա: Համայնքը գտնվում է Կանաձոր-Թբիլիսի ավտամայրուղու վրա: ՀՀ Ազգային ժողովի կողմից 2021 թվականի սեպտեմբերի 24-ին ընդունված Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Թումանյան, Դսեղ և Չկալով համայնքների միավորման արդյունքում ձևավորվել է Թումանյան համայնքը: Թումանյան համայնքը բազմաբնակավայր համայնք է: Թումանյան համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերն են՝ քաղաք Թումանյանը և Աթան, Ահնիձոր, Դսեղ, Լորուտ, Մարց, Շամուտ, Չկալով, Քարինջ և Քոբայր գյուղերը: Համայնքի կենտրոնն է հանդիսանում Թումանյան քաղաքը: Համայնքի բնակավայրերում զբաղվում են գյուղատնտեսությամբ, անասնապահությամբ, մեղվաբուծությամբ: Համայնքի բնակավայրերը շրջապատված են անտառներով: Անտառները հարուստ են պտղատու և դեկորատիվ ծառատեսակներով, հատապտուղներով, մեղրատու թփաբույսերով և բժշկության մեջ օգտագործվող դեղաբույսերով: Թումանյան համայնքի բնակավայրերում կա վանական համալիր, եկեղեցիներ և բազմաթիվ խաչքարեր: Թումանյան համայնքը բարենպաստ պայմաններ ունի զբոսաշրջության զարգացման համար և իր կանաչապատ, հարուստ բնությամբ միշտ էլ գրավել է բոլորի ուշադրությունը: Թումանյանում զբոսաշրջության զարգացման համար մեծ գրավական է Քոբայրի վանքը: Այն 12-13-րդ դդ վանքային համալիր է: Քոբայրի վանքը հարուստ է միջնադարյան մոնումենտալ որմնանկարներով: Վանքը, գտնվելով բարձրադիր դարավանդի վրա իր ճարտարապետական և զուգական տեսքով գրավում է զբոսաշրջիկների ուշադրությունը: Համայնքն իր վարչական սահմաններով սահմանակից է Ալավերդի, Օձուն Փամբակ համայնքներին և ՀՀ Տավուշի մարզին: Ստորև ներկայացվում է համառոտ տեղեկատվություն համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի մասին:

Ստորև ներկայացվում է համառոտ տեղեկատվություն համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի մասին:

ՔԱՂԱՔԹՈՒՄԱՆՅԱՆ, ՔՈԲԱՅՐ ԿԱՅԱՐԱՆԻ ԳՅՈՒՂ

Քաղաքը նախկինում եղել է Թիֆլիսի նահանգի Լոռի-Բորջալուի գավառի կազմում և ունեցել է Ձագիձոր, Ձաղիձոր անվանումները: Թումանյան է վերանվանվել 1951 թվականին՝ի պատիվ Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի: Ձաղիձորը 1921թ. հուլիսի 20-ին ԽՍՀ վարչական վերաբաժանումների մասին դեկրետով եղել է Լոռու գավառի Դսեղ գավառամասի կազմում, 1930թ. սեպտեմբերի 9-ից՝ Ալավերդու վարչական շրջանի կազմում, 1969թ.-ից՝ Թումանյանի վարչական շրջանի կազմում: Թումանյանը (նախկին Ձաղիձորը) 1947թ.-ից մինչև 1995թ. ունեցել է քաղաքատիպ ավանի կարգավիճակ: 1995թ.-ին ՀՀ վարչատարածքային բաժանման մասին ՀՀ օրենքով Լոռու մարզի կազմում Թումանյան քաղաքատիպ ավանին տրվել է համայնքի և քաղաքի կարգավիճակ: Համայնքի կազմում ընդգրկված Քոբեր կայարանի գյուղը հիմնադրվել է՝ որպես երկաթուղային կայարան, գտնվում է Դեբեդ գետի ձախ ափին, Թումանյան քաղաքից 1 կմ հեռավորության վրա: Գյուղը վարչատարածքային առումով սկզբում գտնվում էր Թումանյանի ավանային խորհրդի, հետագայում Թումանյան քաղաքային համայնքի կազմում: Թումանյան քաղաքը գտնվում է Լոռու մարզի հյուսիս-արևելյան մասում, զբաղեցնում է Դեբեդ գետի ստորին հոսանքի ավազանի աջափնյա մասը, Դեբեդի կիրճի աջափնյա դարավանդները: Քաղաքի բարձրությունը ծովի մակերևույթից 810 մետր է: Թումանյան քաղաքի հեռավորությունը մայրաքաղաքից՝ 158 կմ է, մարզկենտրոն Կանաձորից՝ 38 կմ, տարածաշրջանային կենտրոն Ալավերդի քաղաքից՝ 14 կմ: Քաղաքի մոտով է անցնում Մ-6 միջպետական նշանակության Վանաձոր-Ալավերդի Վրաստանի սահման ճանապարհը: Քոբեր կայարանով է անցնում Երևան-Թբիլիսի երկաթգծի 4 կմ հատվածը: Քաղաքի և Քոբեր կայարանի գյուղի կլիման մերձարևադարձային է, չափավոր շոգ և չորային ամառներով, մեղմ ձմեռներով: Ձմեռը չափավոր ցուրտ է, ձյան կայուն շերտով: Գարունը խոնավ է, երկարատև: Աշունը չափավոր է, երկրորդ կեսին՝ խոնավ: Տեղումների տարեկան քանակը կազմում է 600-650 մմ: Քաղաքը ագրո կլիմայական տեսակետից ընկած է ինտենսիվ ոռոգման գոտում: Բնական լանդշաֆտները լեռնանտառներն են: Քաղաքը շրջապատված է անտառներով: Անտառները հարուստ են ծառատեսակներով (ընկուզենի, կաղնի, լորի, հացենի, հոնի, վայրիտանձենի, խնձորենի և այլն),

հատապտուղներով (մոշ, մոռ, մասուր, ալոճալյն), մեղրատու թփաբույսերով և բժշկության մեջ օգտագործվող դեղաբույսերով: Հիմնական ծառատեսակներն են լորենին, բոխին և հացենին: Գետափնյա հարթ տարածությունների վրա կան պտղատ ուայգիներ (խնձորի, դեղձի, սալորի, ընկույզիկալյն): Քաղաքում կա հանրակրթական դպրոց, նախադպրոցական ուսումնական հաստատություն, արվեստի դպրոց, մշակույթի տուն, սմարթ սենյակ, հայրենագիտական թանգարան, առողջության կենտրոն, կապի հանգույց, մանկական խաղահրապարակ, մարզադաշտ, կարի փոքր արտադրամաս, հյուրատուն և համայնքապետարանում բացվել է քաղաքացիների սպասարկման գրասենյակ: Թումանյան քաղաքը եղել է արդյունաբերական ավան, որտեղ գործել են ՀՆԳ, ՏՖ, ԲՄԲ, հիվանդանոց, ամբուլատորիա, ԱՀԿ, երեք մանկապարտեզ: Քաղաքի տարածքում գտնվող հրակայուն կավային ապարների հանքավայրի բազայի վրա 1951թ. կառուցվել է Թումանյանի հրակայուն աղյուսի գործարանը, որը գործում էր մինչև խորհրդային կարգերի փլուզումը: Գործարանն արտադրում էր հրակայուն աղյուս, եռաշերտ ծայրակալներ, ընկալափոխանցիկ սարքեր: Քաղաքի և Քոբեր կայարանի գյուղի տարածքը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով: Բնական հուշարձաններ են Դեբեդի խորը ձորը, գետի երկու ափերին խիստ թեք և աստիճանաձև բարձրացող լանջերի վրա տարբեր չափի քարախորշերը՝ շրջապատված խիստ թեք, անտառապատ լանջերով: Պատմամշակութային հուշարձանները տարբեր են ըստ կառուցման ժամանակահատվածի (Ք.ա. 2-1 հազարամյակից մինչև Ք.հ. 13-15-րդ դարեր), ավելի բազմազան են 13-14-րդ դարերի հուշարձանները (եկեղեցիներ, ամրոցներ, գյուղատեղիներ): Տարբեր են նաև հուշարձանների պահպանվածության աստիճանները՝ սկսած ավերակներից մինչև լավ պահպանվածները: Համայնքի տարածքում է Քոբայրի վանական համալիրը (Քոբայրավանք, 12-13-րդ դարեր), որի կազմում են Մարիամաշեն և գլխավոր միանավերը (12-13-րդ դարեր, երկուսն էլ՝ թաղածածկ) և 13-րդ դարի թաղածածկ եկեղեցիները: 2002թ.-ին ՀՀ կառավարության կողմից հաստատված պատմության և մշակույթի հուշարձանների ցանկում՝ Թումանյան քաղաքում ներառված է 11 հուշարձան (9 միավոր), Քոբեր կայարանի գյուղում՝ 71 հուշարձան (8 միավոր):

ԳՅՈՒՂ ԱԹԱՆ

Գյուղը հիմնադրվել է 1827թ.-ին, Հաղպատի վանքի կալվածքները լքած գյուղացիների կողմից: Այդ են վկայում գյուղում և շրջակայքում եղած խաչքարերը և գերեզմանները: Գյուղը Աթան անունը ստացել է Աթանես Վարդապետի անունից: Աթան գյուղը բնակեցվել է Հաղպատից, Սանահինից և Շիրակից տարբեր ժամանակներում տեղափոխված բնակիչներով: Գյուղամիջում կա հին եկեղեցի, իսկ շրջակայքում՝ աշխարհիկ հին շինությունների ավերակներ: Գյուղը գտնվում է Ալավերդի քաղաքից 24 կմ հարավ-արևելք, բարձրադիր և լեռնային վայրում՝ ծովի մակերևույթից 1650մ բարձրության վրա, հեռավորությունը մայրաքաղաքից՝ 184կմ, մարզկենտրոնից՝ 64կմ, Ալավերդի քաղաքից՝ 45կմ, համայնքի կենտրոնից՝ 28կմ: Բնակավայրը սահմանակից է Շամուտ և Անիծոր գյուղերին: Գյուղի կլիման բարեխառն է, տևական, ցուրտ ձմեռներով: Ամեն տարի հաստատվում է կայուն ձնածածկույթ: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Տարեկան թափվում են 600-700մմ մթնոլորտային տեղումներ: Ագրոկլիմայական տեսակետից գյուղն ընկած է մասնակի ոռոգման գոտում: Գյուղի տարածքում կան բարձրորակ կավի հանքավայրեր: Մոտ 1860-ական թվականներից, մասնավոր միջոցներով գոյատևել է Աթան գյուղի դպրոցը, այն եղել է տարրական, չի ունեցել սեփական շենք և տեղավորված է եղել փայտաշեն սենյակում, մինչև խորհրդային տարիները, երբ 1924-ին պաշտոնապես բացվել է դպրոց: Գյուղում կա հանրակրթական դպրոց, բուժկետ, մշակույթի տուն և գրադարան:

ԳՅՈՒՂ ԱՀՆԻՁՈՐ

Անիծոր գյուղը պատմական արձանագրություններում հիշատակվում է դեռևս 16-17-րդ դարերից: Սակայն, այն ավելի հին է, քան ենթադրվում է, ինչի մասին են վկայում գյուղի մոտակայքում գտնվող խաչքարերը: Գյուղի ներկայիս բնակիչների նախնիները 19-րդ դարի երկրորդ կեսին եկել են Սանահին և Հաղպատ գյուղերից: Նրանք հիմնականում վանքի կալվածքները լքած բնակիչներն են եղել: Գյուղում կա 13-րդ դարի եկեղեցի, գյուղի շրջակայքում կան 10-ից ավելի խաչքարեր: Անիծորում է ծնվել հայ մեծ արձակագիր, կինո սցենարիստ Հրանտ Մաթևոսյանը: Գյուղը գտնվում է մարզկենտրոնից 52 կմ հյուսիս-արևելք, Ալավերդի քաղաքից 26կմ հարավ-արևելք, լեռնային անտառապատ վայրում՝ ծովի մակերևույթից 1520մ բարձրության վրա: Գյուղի հեռավորությունը մայրաքաղաքից 177կմ է,

մարզկենտրոնից՝ 57կմ, Ալավերդի քաղաքից՝ 37կմ, համայնքի կենտրոնից՝ 23կմ: Բնակավայրը սահմանակից է Աթան, Շամուտ, Լորուտ գյուղերին և Իջևան քաղաքին: Կլիման բարեխառն է, տևական, ցուրտ ձմեռներով: Ամեն տարի հաստատվում է կայուն ձնածածկույթ: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Տարեկան թափվում են 600-700 մմ մթնոլորտային տեղումներ: Ագրոկլիմայական տեսակետից գյուղն ընկած է մասնակի ոռոգման գոտում: Գյուղը հարուստ է անտառներով, վայրի բերքատու ծառերով և բնական աղբյուրներով: Գյուղի տարածքով է անցնում Ահիձոր գետը, որը գյուղից ներքև ձախից միախառնվում է Մարց գետին: Գյուղում կա հանրակրթական դպրոց, բուժկետ, մշակույթի տուն և գրադարան:

ԳՅՈՒՂ ԴՍԵՂ

Ամենայն հայոց բանաստեղծն այսպես է բնութագրել իր հայրենի գյուղը. Դսեղը յուր անառիկ ու չքնաղ դիրքով նման է մի բնակերտ ամրոցի: Նրա փոքրիկ հարթավայրը շրջափակված ու ամրացված է հարավից անտառապատ սարերով, իսկ մնացած երեք կողմերից խոր ձորերով: Դսեղը գտնվում է ՀՀ Լոռու մարզում, Դեբեդ գետի աջ ափնյա սարահարթի վրա: Բնակավայրի հեռավորությունը Վանաձոր մարզկենտրոնից 30կմ է, Երևանից՝ 150կմ, միջպետական նշանակության Երևան-Թբիլիսի մայրաղու Վանաձոր-Ալավերդի հատվածից 8կմ, Երևան-Թբիլիսի երկաթուղու Թումանյան կայարանից՝ 10կմ է: Գյուղը հյուսիսից սահմանակցում է Քարինջի, գյուղին, Թումանյան քաղաքին և Ծաթերի համայնքային հողերին, արևելքից՝ Դսեղի անտառտնտեսության, իսկ արևմուտքից՝ Գուգարքի անտառ տնտեսության հողերին: Համայնքի վարչական տարածքը գտնվում է ծովի մակերևույթից 829-2180մ բարձրության վրա, որը և հանգեցրել է կլիմայական պայմանների ընդգծված տարբերության ներքին, միջին և վերին հատվածներում: Ըստ Օձունի օդերևութաբանական կայանի գրանցումների՝ առավելագույն և նվազագույն ջերմաստիճանները հունվարին կարող են լինել +18, -28, մայիսին՝ +32, -3, օգոստոսին՝ +37, +3, հոկտեմբերին՝ +31, -10 աստիճան: Դսեղի հանդի սահմանները հարավից սկսվում են զովասուն բարձր լեռներով, հյուսիսում վերջանում են անդնդախոր ձորերով: Դսեղն աչքի է ընկնում համեմատաբար մեղմ և խոնավ կլիմայով: Տարվա մեծ մասը գյուղը ենթարկվում է Միջերկրական և Սև ծովերի խոնավ օդային զանգվածների հոսքին, որոնք բերում են առատ տեղումներ: Տեղումների քանակը մեծ է մայիս-հունիս ամիսներին: Ամռանը և աշնան երկրորդ կեսին Դսեղում գերակշռում է ցածր խոնավությամբ տաք օդը: Դսեղը Հայաստանի հնագույն և հանրահայտ գյուղերից է: Գոյություն ունի Դսեղ անվան ստուգաբանության հետ կապված երկու տարբերակ. Դսեղ նշանակում է դուրս տեղ, այսինքն բնակավայրից զատված, առանձնացված տեղ, երկրորդը ըստ ավանդագրույցի ձորի գյուղերից տարբերելու համար սարահարթի գյուղը կոչել են Դսի գեղ կամ Դսեղ: Գյուղն, ըստ գիտական հիմնավորումների, հիմնադրվել է դեռևս մ.թ.ա.: Գյուղի շրջակայքում կան քարանձավներ Դոնավոր էրլե, Ծակ քարը և գյուղից Ձորագես իջնելու Մուտի աջ կողմի ցածր քարայրը, որոնք հնագույն ժամանակներում մարդիկ օգտագործել են որպես կացարան, իսկ հետագայում օգտագործվել են միայն անասունների համար: Դսեղ անունն առաջին անգամ հիշատակվում է 15-րդ դարի սկզբին: Հակոբ Գ Ասեցի կաթողիկոսը 1404-1411թթ. Դսեղը հիշատակում է Սանահինի հարկատուների ցուցակում: Գյուղը հարուստ է բազմապիսի հուշարձաններով՝ վանքային համալիրներ, եկեղեցիներ, մատուռներ, խաչքարեր, կոթողներ, կացարանների մնացորդներ, միջնադարյան գերեզմանոցներ և այլն: Գյուղի անցյալը սերտորեն կապվում է Մամիկոնյան նշանավոր տոհմի շինարարական և բարենորոգչական գործունեության հետ: Գյուղի տարածքում կան բազմաթիվ արժեքավոր խաչքարեր, մատուռներ, եկեղեցիներ: 19-րդ դարի II կեսի պեղումների և 1967-69թթ. գյուղի ներկայիս կենտրոնի կառուցապատման աշխատանքների ժամանակ հայտնաբերվել են Ք.ա. 1.դ. գերեզմաններ և բրոնզե դարի կենցաղային իրեր: Պահպանվել են նաև վաղ միջնադարին վերագրվող բաղնիքի խճանկարհատակը, բազիլիկ եկեղեցու (654թ.) ավերակները ազգագրական թանգարանով. Մամիկոնյան իշխանների հիմնադրած և 12դ. վերակառուցված Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, խաչքարերով և կոթողով գերեզմանատունը (10-11դ.դ.), խաչարձաններ (11դ.): Գյուղի անմիջական հարևանությամբ են գտնվում Քառասունից Մանկանը (12դդ), և Մամիկոնյանների հիմնադրած Բարձրաքաջ Ս. Գրիգոր (11դ.դ.) վանքերը, Սիրուն խաչ խաչքարը (11դ.): Գյուղում գտնվող գերեզմանատանը կան բազում այլ խաչքարեր, հուշակոթող և 7րդ դարի մի փոքր բազիլիկ եկեղեցու ավերակները: Գյուղի տարածքում կա չորս մատուռ, որից կանգուն են մնացել Սբ. Սարգիս և Գրիգլիս Բալա Գիքորի կառուցած մատուռները: Դսեղը մեծանուն

հայ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի (1869-1923) ծննդավայրն է, և նրա հայրենի տանը գործում է վերջինիս տուն-թանգարանը: Գյուղի կենտրոնում վեր է խոյանում բրոնզաձույլ արձանը(հեղինակ Ղ. Չուբարյան): Գյուղի կենտրոնում Թումանյանի տուն թանգարանի հարևանությամբ գտնվում է գործող եկեղեցին: Սկզբնական շինությունից մնացած մասերը վերագրվում են VII դարին: Եկեղեցին մի քանի անգամ վերանորոգվել է, իսկ 20-րդ դարի սկզբին վերակառուցվել է: Գյուղի հարավ-արևելքում գտնվող Ծովաքար կոչվող սարի ստորոտում է գտնվում .Ծովեր կոչվող գեղեցիկ լիճը: Խորհրդային շրջանում այն մտնում էր ոռոգման համակարգի մեջ:

ԳՅՈՒՂ ԼՈՐՈՒՏ

Լորուտ գյուղը հիմնադրվել է 1843 թվականին, առաջնաբնակները եկել են նախկին Նոյեմբերյանի շրջանի ներկայիս Բերդավան, այն ժամանակվա Ղալաչա գյուղից, մի քանի ընտանիքներ եկել են նախկին Ալավերդու շրջանի գյուղերից: Լորուտի մոտակայքում 1979թ. հայտնաբերվել են բրոնզեդարի մշակույթի մնացորդներ, դամբարաններ, սալարկղային թաղումներով: Գյուղի մոտ կան նաև միջնադարյան պատմա-ճարտարապետական հուշարձաններ՝ խաչքարեր, գյուղատեղի, Լորուտ գետի վրա կան միջնադարյան երկու կամուրջներ: Գյուղն ունի եկեղեցի՝ Սուրբ Սարգիս: Լորուտի մոտ է գտնվում 13-րդ դարի գիտնական Վանական Վարդապետի քարայր ապաստարանը, որտեղ նա ուսուցանում էր իր սաներին: Գյուղը գտնվում է Մարց գետի աջափնյա լանջին, Ալավերդի քաղաքից մոտ 20կմ հարավ-արևելք, բլուրների վրա անտառապատ գեղատեսիլ վայրում: Գյուղի հեռավորությունը մայրաքաղաքից 177կմ է, մարզկենտրոնից՝ 57կմ, Ալավերդի քաղաքից՝ 38 կմ, համայնքի կենտրոնից՝ 21 կմ: Գյուղի բարձրությունը ծովի մակերևույթից 1500 մետր է: Բնակավայրը սահմանակից է Մարց, Շամուտ ու Ահնիձոր գյուղերին: Գյուղի կլիման համեմատաբար մեղմ է: Ագրոկլիմայական տեսակետից գյուղն ընկած է մասնակի ոռոգման գոտում: Բնական լանդշաֆտները լեռնանտառներն են: Գյուղում կա հանրակրթական դպրոց, նախադպրոցական ուսումնական հաստատություն, բուժկետ, կապի հանգույց:

ԳՅՈՒՂ ՄԱՐՑ

Մարց գյուղը Լոռու մարզի հնագույն գյուղերից է: Առաջին անգամ գրավոր հիշատակվում է Բեմի խաչքարի արձանագրությունում (1211թ.): 1967թ. հնագետների խումբը՝ Ա. Քալանթարյանի գլխավորությամբ, Մարցի շրջակայքում հետազոտություններ կատարելիս, պարզել է, որ գյուղի շրջակայքում դեռևս 3000 տարի առաջ եղել են մարդկանց բնակավայրեր: Մարցի տարածքում կան պատմաճարտարապետական բազմաթիվ հուշարձաններ: Գյուղից 5 կմ դեպի հարավ-արևելք գտնվում է Իգատակի վանքը (1255թ.), գյուղի մեջ՝ Սուրբ Նշան եկեղեցին: Շրջակայքում կան քսանից ավելի ավերակ գյուղատեղիներ (Իգատակ, Արփաթալա, Ջազիտներ, Դեղձուտ և այլն), մատուռներ (13-14-րդ դարեր), խաչարձաններ (13-րդ դար), խաչքարերով հարուստ գերեզմանոցներ (13-17-րդ դարեր) և միջնադարյան կամուրջներ (Մոտկորի, Ջուխտակ, Լորի): Գյուղի ներկայիս բնակիչների նախնիների հիմնական մասը այստեղ հաստատվել է Արցախից, Կարսից, Օձունից և այլ վայրերից: Մարցում են ծնվել ԽՍՀՄ հերոս Աշխարհաբեկ Սարգսի Ղազարյանը և Սոցիալիստական աշխատանքի հերոս Արշակ Շամիրի Ղազարյանը: Գյուղը գտնվում է Ալավերդի քաղաքից 16 կմ հարավ-արևելք, Մարցի սարավանդին, Մարց գետի աջափնին, ծովի մակերևույթից 1050 մ բարձրության վրա: Գյուղի կլիման մեղմ է, բարեխառն: Ձմեռը չափավոր մեղմ է, համեմատաբար տաք, անկայուն ձյուն ածածկույթով: Ամառը տաք է, երկարատև: Մարցի տարածքի բնական բուսածածկն անտառային է: Բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաքից 164կմ է, մարզկենտրոնից՝ 44 կմ, տարածաշրջանային կենտրոն Ալավերդի քաղաքից՝ 25 կմ, համայնքի կենտրոնից՝ 8 կմ: Բնակավայրը սահմանակից է Լորուտ, Դսեղ, Քարինջ գյուղերին: Գյուղի տարածքով է անցնում Ալավերդու հանքաբերգոտու Մարցի գետ - Պրիվոլնոյե ենթագոտու մի մասը, որը հարուստ է անագի հանքավայրերով: Մարցի շրջակայքում կա ոսկու բազմամետաղային խոշոր հանքավայր: Դպրոցը հիմնադրվել է 20-րդ դարի սկզբին: Գյուղում կա հանրակրթական դպրոց, գրադարան, կապի հանգույց և մշակույթի տուն: ԳՅՈՒՂ ՇԱՄՈՒՏ Շամուտ գյուղը հիմնադրվել է 1850 թվականին: Գյուղի բնակիչների նախնիների հիմնական մասը այստեղ հաստատվել է Արցախից: Գյուղի մեջ և նրա շրջակայքում պահպանվել են՝ ամրոց (18րդ դար), եկեղեցի (17-րդ դար), գյուղատեղի (13-17-րդ դարեր) և Սբ. Սարգիս մատուռ (17-րդ դար): Գյուղը գտնվում է Գուգարաց լեռների արևմտյան մասում, Մարց գետի աջափնյա լեռնակողին: Գյուղի հեռավորությունը մայրաքաղաքից 180 կմ է, մարզկենտրոնից՝ 59 կմ,

տարածաշրջանային կենտրոն Ալավերդի քաղաքից՝ 40 կմ, համայնքի կենտրոնից՝ 23 կմ: Գյուղի բարձրությունը ծովի մակերևույթից 1560 մետր է: Բնակավայրը սահմանակից է Լորուտ և Աթան գյուղերին: Գյուղի կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ զով: Գյուղում հաճախակի են չորային տարիները: Բնակավայրի տարածքում կան ածխի հանքավայրեր, որոնք չեն շահագործվում: Գյուղում կա հանրակրթական դպրոց, բուժկետ, գրադարան և կապի հանգույց:

Գյուղ Շամուտ

Շամուտ գյուղը հիմնադրվել է 1850 թվականին: Գյուղի բնակիչների նախնիների հիմնական մասը այստեղ հաստատվել է Արցախից: Գյուղի մեջ և նրա շրջակայքում պահպանվել են՝ ամրոց (18-րդ դար), եկեղեցի (17-րդ դար), գյուղատեղի (13-17-րդ դարեր) և Սբ. Սարգիս մատուռ (17-րդ դար): Գյուղը գտնվում է Լոռու մարզի Ալավերդու տարածաշրջանում, Գուգարաց լեռների արևմտյան մասում, Մարց գետի աջափնյա լեռնակողին: Գյուղի բարձրությունը ծովի մակերևույթից 1560 մետր է: Սահմանակից է Լորուտ և Աթան գյուղերին:

ԳՅՈՒՂ ՉԿԱԼՈՎ

Չկալով գյուղը հիմնադրվել 1850 թվականին գուգարաց Սադուն իշխանի կողմից՝ ամրությունների նպատակով: Չկալով գյուղը գտնվում է ՀՀ Լոռու մարզի նախկին Թումանյանի շրջանի վարչական տարածքում: Երևան Վանաձոր-Թբիլիսի մայրուղոց հեռավորությունը 8 կմ է, Երևանից 145 կմ, Ալավերդուց 30 կմ: Գյուղը գտնվում է Վանաձոր-Ալավերդի մայրուղու միջնամասում: Բնակավայրի հեռավորությունը Վանաձոր մարզկենտրոնից 30 կմ է, Ալավերդուց՝ 30 կմ, Երևանից՝ 150 կմ, Թբիլիսիից՝ 130 կմ, միջպետական նշանակության Երևան-Թբիլիսի մայրուղու Վանաձոր-Ալավերդի հատվածից՝ 8 կմ, Երևան-Թբիլիսի երկաթուղու Թումանյան կայարանից՝ 10 կմ է: Գյուղի վարչական տարածքը գտնվում ծովի մակերևույթից 1450 մ բարձրության վրա, որը և հանգեցրել է կլիմայական պայմանների ընդգծված տարբերության ներքին, միջին և վերին հատվածներում: Գյուղը գյուղատնտեսության համար ռիսկային գոտի է հողերը չեն ոռոգվում, տարվա ընթացքում տեղումները անհամաչափ են: Գյուղատնտեսությանը մեծ վնաս են հասցնում կարկտահարումները, ցրտահարումները, երաշտները: Ըստ Օձունի օդերևութաբանական կայանի գրանցումների՝ առավելագույն և նվազագույն ջերմաստիճանները հունվարին կարող են լինել +18, -28, մայիսին՝ +32, -3, օգոստոսին +37, +3, հոկտեմբերին +31, -10 աստիճան: Գյուղում ներկայումս գործում է հիմնական դպրոց, բուժկետ, հեռուստակայան: Գյուղում կա եկեղեց, հուշարձաններ, բազմաթիվ խաչքարեր:

ԳՅՈՒՂ ՔԱՐԻՆՋ

Քարինջ գյուղը հիմնադրվել է 1841 թվականին: Գյուղի բնակիչների նախնիների հիմնական մասը այստեղ հաստատվել է Արցախից: Գյուղը գտնվում է Չաթինդաղ լեռան ստորոտում, ծովի մակերևույթից 1230 մ բարձրության վրա: Գյուղն իր գեղեցիկ աշխարհագրական դիրքով և գեղատեսիլ բնությամբ արժանացել է հայ մեծ նկարիչ Մարտիրոս Սարյանի վրձնին (1952թ.), այդ նկարը պատկերված է հայկական 5-հազարանոց թղթադրամի վրա: Գյուղի կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ զով: Գյուղում հաճախակի են չորային տարիները, որից մեծապես տուժում են գյուղատնտեսական աշխատանքները: Բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաքից 164 կմ է, մարզկենտրոնից՝ 44 կմ, տարածաշրջանային կենտրոնից՝ 25 կմ, համայնքի կենտրոնից՝ 8 կմ: Բնակավայրը սահմանակից է Թումանյան քաղաքին և Մարց, Դսեղ ու Ակներ գյուղերին: Գյուղի տարածքում կան բազալտի հանքավայրեր: Գյուղի կենտրոնում կա եկեղեցի: Գյուղում կա հանրակրթական դպրոց, նախադպրոցական ուսումնական հաստատություն, գրադարան, փոստ և բուժկետ:

2.ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Թումանյան քաղաքի հեռավորությունը մայրաքաղաքից՝ 158 կմ է, մարզկենտրոնից՝ 35 կմ հարավ-արևելք, տարածաշրջանային կենտրոն Ալավերդի քաղաքից՝ 14 կմ: Դեբեդ գետի ձախ ակիին: Բարձրությունը ծովի մակարդակից մոտ 850-1500 մ է:

3.ՀԱՄԱՅՆՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը (մմ) 85 Օդի միջին ջերմաստիճանը հունվարին (օC) -10 Օդի միջին ջերմաստիճանը հուլիսին (օC) +22:

4.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Համայնքում ընդգրկված բնակավայրերը և դրանց հեռավորությունը համայնքի կենտրոնից	1.1 – 7
1.1) Քարինջ	1.2 – 10
1.2) Մարց	1.3 – 20
1.3) Լորուտ	1.4 – 22
1.4) Ծամուտ	1.5 – 28
1.5) Աթան	1.6 – 27
1.6) Ահնիձոր	1.7 - 19
1.7) Չկալով	1.8 - 17
1.8) Դսեղ	
2. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	ԹՈՒՄԱՆՅԱՆ
3. Համայնքի կենտրոնի հեռավորությունը՝	
3.1) մայրաքաղաքից (կմ)	150
3.2) մարզկենտրոնից (կմ)	35
3.3) պետական սահմանիցուղիղ գծով (կմ)	70
3.4) նախկին շրջկենտրոնից (կմ)	15
3.5) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	0,1-30
3.6) երկաթուղային կայարանից (առկայության դեպքում) (կմ)	9
4. Համայնքի կենտրոնի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	850
5. Համայնքի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	382,4/38243,81
6. Սահմանակից համայնքների անվանումները	Ալավերդի, Փամբակ, Տավուշի մարզ

7. Համայնքապետարանի էլեկտրոնային փոստի հասցեն	tumanyan.city@mail.ru
8. Համացանցային պաշտոնական կայքի հասցեն	tumanyancity.am
9. Համայնքի ղեկավարի հեռախոսահամարը	098477346
10. Համայնքապետարանի հեռախոսահամարը	098048046
11. Համայնքի հեռախոսային կոդը	0253
12. Համայնքում փոստային բաժանմունքի առկայությունը (այո, ոչ), քանակը	Այո, 7
13. Համայնքապետարանի փոստային դասիչը	-
14. Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	Այո /առկա է միայն Թումանյան քաղաքում/
15. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	Այո

5. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

	2023թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	6727
2. Գրանցված ծնունդների քանակը	68
2. Մահացության դեպքերի քանակը	85
3. Ամուսնությունների քանակը	27
4. Ամուսնալուծությունների քանակը	1
5. Տնային տնտեսությունների թիվը	1781
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	104
7. Կենսաթոշակառուների քանակը	903
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	190

6. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	01.01.2023թ.
1. Գրադարանների քանակը	7
2. Արվեստի դպրոցների քանակը	1
3. Երաժշտական դպրոցների քանակը	0
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	5 նախակրթարան 4 ՆՈՒՀ
5. Հանրակրթական դպրոցների քանակը	9
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	0
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	0

8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	0
9. Մարզադպրոցների քանակը	0

7.ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

	01.01.2023թ.
1. Համայնքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ²)	112444.8
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	26
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	1156

8.ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	01.01.2023թ.
1. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	19228,24
2. Բնակավայրերի հողեր (հա)	783,82
3. Արդյունաբերական, ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների	115,03
4. Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտներ	39,72
5. Հատուկ նշանակության	127,47
6. Հատուկ պահպանվող տարածքների	6,36
7. Անտառային	17807,99
8. Զրային	135,18
9.Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	8858
10. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	2292
11. Խոզերի գլուխաքանակը	1567
12. Գյուղատնտեսական տեխնիկա	251
12.1 տրակտորներ (քանակը)	50
12.2 կոմբայններ (քանակը)	0
13. Գյուղացիական տնտեսությունների թիվը	881

9.ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	22
2. Համայնքում գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	Այո
3. Համայնքում աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	Ոչ
4. Գերեզմանատան առկայությունը համայնքում (այո, ոչ)	Այո

5. Համայնքային ենթակայության ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	96.2
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	5
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	1
6.2 Էքսկավատորների քանակը	1
6.3 Թրթուրավոր տրակտորների քանակը	0
6.4 Գրեյդերների քանակը	0
6.5 Աղբատար մեքենաների քանակը	2
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	0
6.8 Վակումային փոշեկուլ մեքենաների քանակը	0
6.9 Ավտոաշտարակների քանակը	0
7. Համայնքի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	32
8. Համայնքի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	0
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	Ոչ

10.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

	01.01.2023թ.
1.Համայնքապետարանի աշխատողների թվաքանակը, որից՝	44
1.1 համայնքային ծառայողներ	22
2.Վարչական դեկավարների թվաքանակը	8
3. Ավագանու անդամների օրենքով սահմանված թվաքանակը	15
4. Ավագանու անդամների փաստացի թվաքանակը	15

11. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրը (նկարագրությունը)	Ակնկալվող լուծումը և լուծման ժամկետները
Գործազրկության բարձր մակարդակ	Հումքի վերամշակման (կաթի, հատապտուղների և մսամթերքի) արտադրամասերի կառուցում, տուրիզմի զարգացում
Միջբնակավայրային ճանապարհներ	Միջբնակավայրային ճանապարհների հիմնանորոգում
Երիտասարդների համար ժամանցային կենտրոնների բացակայություն	Մարզադպրոցների կառուցում և սպորտային կյանքի զարգացում, ժողգործիքների խմբակների ստեղծում

Գյուղմթերքի իրացում	Համայնք, Կառավարության աջակցություն, դոնոր կազմակերպություններ
Ջրագծի արտաքին և ներքին ցանցի , ոռոգման ցանցի նորոգման կարիք	Համայնք, Կառավարության աջակցություն, դոնոր կազմակերպություններ
Հողերի կարգի փոփոխություն	Համայնք, Կառավարության աջակցություն, դոնոր կազմակերպություններ
Էլեկտրահաղորդակցության գծերի անբարեկարգ վիճակ	Նոր էլեկտրահաղորդակցության գծերի կառուցում
Գերեզմանոցների ոչ բարվոք վիճակ	Գերեզմանոցների ցանկապատում
Գյուղատնտեսական հողերի մշակման ցածր մակարդակ(գյուղտեխնիկայի բացակայություն)	Համայնք, Կառավարության աջակցություն, դոնոր կազմակերպություններ